ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
«ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/27» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Հ.Արտաշատ 05. 05.2026թ.
Ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Բուժական գծով փոխտնօրեն Աղասի Մահտեսյան

Անդամներ՝
Հաշվապահ Հասմիկ Սահակյան
Դեղագործ Սոֆի Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Գնումների համակարգող Հասմիկ Մկրտչյան

---

1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1 Հիմք ընդունելով 30.04.2026թ.-ի Ե/630-26 գրությունը .

Վերոնշյալ ընթացակարգի շրջանակներում նախատեսված են 16 չափաբաժիններ, որոնցից միայն 13-րդ և 14-րդ չափաբաժինների անվանումներում կարող է առաջանալ որոշակի ընկալում առ այն, թե առկա է հղում կոնկրետ արտադրատեսակի: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ տվյալ ձևակերպումները չեն հետապնդել որևէ արտադրողի կամ ապրանքանիշի նախապատվություն տալու նպատակ, այլ կիրառվել են բացառապես համապատասխան ապրանքների տեխնիկական և ֆունկցիոնալ հատկանիշների առավել հստակ և ամբողջական բնութագրումն ապահովելու համար:
Մասնավորապես՝
13-րդ չափաբաժնում կիրառված «VITAL-XE» ձևակերպումը հանդիսանում է նյութաբանական բնութագրիչ, որը նկարագրում է վիտամին E-ով հարստացված, խաչաձև կապակցված և էթիլենօքսիդով ստերիլիզացված գերբարձր մոլեկուլային քաշով պոլիէթիլեն (UHMWPE): Նշված տեխնոլոգիան լայնորեն կիրառվում է օրթոպեդիկ իմպլանտների արտադրության մեջ՝ ապահովելով բարձր մաշակայունություն և օքսիդատիվ կայունություն:

14-րդ չափաբաժնում օգտագործված «JUMP համակարգ» ձևակերպումը կիրառվել է որպես կառուցվածքային-ֆունկցիոնալ բնութագրիչ՝ ներկայացնելու այնպիսի կոնցեպտ, որը նախատեսված է բարձր արդյունավետության պոլիէթիլենային ներդիրների կիրառմամբ տարբեր տրամաչափերի գլխիկների (մասնավորապես՝ 22 մմ-ից մինչև 36 մմ) օգտագործման հնարավորություն ապահովելու և հոդի շարժունակության մեծ ծավալ ապահովելու համար:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով գրությունը ներկայացված դիտարկումները և առաջնորդվելով գործող օրենսդրության պահանջներով՝ կկատարվի փոփոխություն հրավերի տեխնիկական բնութագրերում՝ մասնավորապես. 13-րդ չափաբաժնի անվանումից կհանվի «VITAL-XE» արտահայտությունը, իսկ 14-րդ չափաբաժնի անվանումից կհանվի «JUMP համակարգ» արտահայտությունը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված դիտարկումների շրջանակում այլ անհամապատասխանություններ մեր կողմից չեն արձանագրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝	Ա. Սահտեսյան	
Անդամներ՝	Հ. Սահակյան	
	Ս.Գևորգյան	
Քարտուղար՝	Հ. Մկրտչյան	